ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

ՆՅՈՒԹԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

© Ալեքսիս Կոմեդա, C2RMF, 2019

Կրթական ծրագիրն իրականացվում է Հայաստանի մշակութային կառույցների մասնագետների համար՝ Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի դեսպանատան աջակցությամբ և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համագործակցությամբ

Հուլիսի 12-14, 2022, Երևան

Հայաստանում Ֆրանսիայի դեսպանությունը և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը սկսում են նոր ծրագիր **«Հայաստան. կրթություն, ժառանգության պահպանում և արժևորում»** խորագրով, որը ֆինանսավորվում է Եվրոպայի և արտաքին գործերի նախարարության սահմանած «Նորարարական ծրագրերի համերաշխության հիմանդրամի» (FSPI) կողմից:

2022 թ. հուլիսից մինչև 2023 թ. դեկտեմբեր իրականացվող ծրագիրը նպատակ ունի աջակցելու Հայաստանի մշակութային ժառանգության պահպանության գործընթացներին, ոլորտի մասնագետների կարողությունների զարգացմանը, ինչպես նաև թանգարանային քաղաքականության իրականացմանը և զարգացմանը: Ծրագիրը նշանավորում է Ֆրանսիայի հանձնառությունը և պատրաստակամությունը՝ աջակցելու Հայաստանի մշակութային ժառանգության պահպանությանը, վերականգնմանը և արժևորմանը:

Ծրագիրն իրագործվում է ի շարունակություն 2021 թ. փետրվարին Ֆրանսիայի Ժառանգության ազգային ինստիտուտի տնօրեն Շարլ Պերսոնայի, Էքս-Մարսել համալսարանի պատվավոր պրոֆեսոր Պատրիկ Տոնապետյանի և Ժառանգության ազգային ինստիտուտի շրջանավարտ, վերականգնող Մելինե Միգիրդիչյանի իրականացրած առաքելության, որի արդյունքում 2021 թվականի հուլիսին վերականգնողների համար Հայաստանում կազմակերպվեցին դասախոսություններ: Դասընթացը խթանեց քննարկումների և փորձի փոխանակման արդյունավետ հարթակի ձևավորումը և համագործակցության շարունակականության ապահովումը: Ժառանգության վերականգնմանն առնչվող խնդիրների վերհանմանը զուգահեռ՝ կարևորվեց նաև ժառանգության պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացման խնդիրը:

2022 թվականի հուլիսին՝ վերապատրաստման և փորձի փոխանակման առաքելությունից մեկ տարի անց, Երևանում կանցկացվեն եռօրյա վերապատրաստում-դասընթաց (հուլիսի 12-14, 2022 թ.)՝ նվիրված մշակութային արժեքների պաշտպանության թեմային: Հանդիպումների շրջանակում կներկայացվի Ֆրանսիայի լավագույն փորձը, որը հնարավորություն կընձեռի քննարկելու և համատեղ մշակելու այն աջակցությունը, որը Ֆրանսիան կարող է տրամադրել քննարկվելիք թեմաների վերաբերյալ:

Առաջին օրը կներկայացվի Ֆրանսիայի մշակույթի նախարարության աշխատանքների կազմակերպման փորձն այս ուղղությամբ, այնուհետև կանցկացվի վերականգնողների և ֆոնդապահների վերապատրաստում: Երկրորդ օրը կվերաբերի Ֆրանսիայում արտակարգ իրավիճակների ծրագրերի իրականացմանը և կանդրադառնա Կապույտ Վահանի կարևոր դերին, իսկ երրորդ օրը կներկայացվեն ժառանգության պաշտպանության մասին օրենքները՝ գողության, վանդալիզմի, հարձակումների և մշակութային արժեքների ապօրինի շրջանառության դեմ:

ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐ

Նատալի Պալմադ-Լե Դանթեք, Ժառանգության ազգային ինստիտուտի տնօրենի օգնական, վերականգնման բաժնի հետազոտական աշխատանքների և շարունակական կրթության պատասխանատու:
Հելեն Վասալ, Ժառանգության ազգային ինստիտուտի տնօրենի օգնական, ֆոնդապահների պատրաստման և շարունակական կրթության պատասխանատու:
Աստղիկ Մարաբյան, Մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

ԽՈՍՆԱԿՆԵՐ

Մարի Կուրսելո - Արվեստի պատմության, թանգարանագիտության և կանխարգելիչ պահպանության ֆակուլտետի շրջանավարտ: Մարի Կուրսելոն 2018 թվականից ղեկավարում է Ֆրանսիայի թանգարանների հետազոտության և վերականգնման կենտրոնը (C2RMF)՝ խորհրդատվություն և աջակցություն ցուցաբերելով Ֆրանսիայի թանգարաններին խնդիրների լուծման և կանխարգելիչ պահպանության նախագծերի իրականացման հարցում: Այս համատեքստում նա իրականացնում է ուսումնասիրության, խորհրդատվության և աջակցության առաքելություններ: Ռիսկերի կառավարման ոլորտում իր ունեցած փորձառությամբ նա պատասխանատու է Ֆրանսիայի թանգարանների պաշտպանական պլանների կազմման համար: Ակտիվ ներգրավված լինելով ժառանգության պաշտպանության գործում՝ նա ներկայումս հանդիսանում է Ֆրանսիաի Կապույտ վահան կազմակերպության (Bouclier Bleu France) նախագահը:

Վինսենթ Նեգրին Քաղաքականության սոցիալական գիտությունների ինստիտուտի (UMR 7220) գիտաշխատող է, նա նաև Փարիզ-Սակլեի ավագ դպրոցի և Փարիզ-Սակլեի համալսարանի ժառանգության հումանիտար գիտությունների բարձր դպրոցի փոխտնօրենն է: Նրա աշխատություններն ու հրապարակումները վերաբերում են միջազգային իրավունքին, մշակույթի և ժառանգության համեմատական իրավունքին, ինչպես նաև իրավական տարբեր նորմերին մշակութային ժառանգության ուղղությամբ: Նա ներգրավված է իրավունքի, մարդաբանության և փիլիսոփայության միջառարկայական աշխատանքներում: Վինսենթ Նեգրին համակարգում է ժառանգության իրավունքի դասերը Ժառանգության ազգային ինստիտուտում և Շայոթ դպրոցում: Նա աշխատում է ՅՈՒՆԵՍԿՕ-ում, UNIDROIT-ում, ICCROM-ում, ICOM-ում և ECOWAS-ում որպես փորձագետ:

Նատալի Պալմադ-Լե Դանտեքը նկարների վերականգնող է և կանխարգելիչ պահպանման խորհրդատու, ավարտել է Փարիզ 1 Պանթեոն Սորբոնի համալսարանը կրկնակի մագիստրոսի կոչումով, ներկայում ասպիրանտ է Փարիզի Սերգի

համալսարանում, որտեղ աշխատում է օրգանական լուծիչների թունաբանական և բնապահպանական ռիսկերի կառավարման վրա: Իր կարիերայի ընթացքում նա աշխատել է բազմաթիվ հեղինակավոր կառույցներում, ինչպիսիք են՝ Ֆրանսիայի թանգարանների հետազոտության և վերականգնման կենտրոնը և ֆրանսիական այլ խոշոր թանգարաններ: 2007 թ.-ից նա տնօրենի օգնական է և պատասխանատու է վերականգնողների շարունակական կրթության համար:

Շարլ Պերսոնան Ազգային կառավարման դպրոցի նախկին ուսանող է (Լեոպոլդ Սեդար Սենգորի առաջխաղացման դպրոց), Սորբոնում (Փարիզ IV) ստացել է պատմության գիտությունների դոկտորի կոչում: Աշխատել է պաշտպանության նախարարության մշակույթի և ժառանգության ոլորտում (պահպանության, ժառանգության և արխիվների բաժնում), այնուհետև աշխատել է մշակույթի նախարարությունում (Ֆրանսիայի թանգարանների բաժնում): Ֆրանսիայի Պատմության տան ասոցիացիայի նախկին տնօրեն է: Աշխատել է որպես Աուդիտորների դատարանի արտաքին փորձագետ: 2019 թվականից ղեկավարում է Ժառանգության ազգային ինստիտուտը: Կամավոր հիմունքներով նա հանդիսանում է Արևելքի ժառանգության և մշակույթի հարցերով պատասխանատու: Շարլ Պերսոնան մի շարք գրքերի հեղինակ է, այդ թվում՝ «Կայսր Նիկիֆոր Ֆոկաս. Բյուզանդիան ընդդեմ իսլամի», Բեռլին, Փարիզ, 2013, «Ֆրանսիայի պատմությունը չի անցնի», Ֆրանսուա Բուրեն հրատ, Փարիզ, 2014, «Փրկե՞լ Վալուա փողոցը», Էմմանուել Լեմիե հրատ., Փարիզ, 2017:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Խաչիկ Հարությունյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն, բ.գ.թ.: Խաչիկ Հարությունյանը 2008 թ. առ այսօր աշխատում է նաև Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում՝ որպես ավագ գիտաշխատող: Միջնադարյան հայերեն ձեռագրերի և սկզբնաղբյուրների մասնագետ է, նրա հետազոտությունները և հրատարակությունները հիմնականում առնչվում են ձեռագրերի հիշատակարաններին և վիմագրերին: Հեղինակ է երեք մենագրության և շուրջ երեք տասնյակ հոդվածների: Որպես հրավիրյալ հետազոտող՝ աշխատել է միջազգային տարբեր գիտական ծրագրերում, այդ թվում՝ Բոլոնիայի համալսարան, Իտալիա (2014-2015), Երուսաղեմի Եբրայական համալսարան, Իսրայել (2019, 2022), Սմիթսոնյան գրադարան և արխիվներ, ԱՄՆ (2021-2022): Երևանի պետական համալսարանի մշակութաբանության ամբիոնի դասախոս է:

ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հուլիսի 12 - 14-ը, 2022

Վայրը՝ Մատենադարան. Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Հուլիսի 12, 2022

մուտքն ազատ է

Տնօրեններ, ֆոնդապահներ, կրթության մենեջերներ, վերականգնողներ, հետազոտողներ, ուսանողներ և այլ հետաքրքրված անձինք,

Հուլիսի 13, 2022

պարտադիր նախնական գրանցում

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Պաշտպանության և Արտակարգ իրավիճակների նախարարությունների աշխատակիցներ, որոնք ներգրավված են ժառանգության պահպանության գործում,

Հուլիսի 14, 2022

պարտադիր նախնական գրանցում

Տնօրեններ, իրավաբաններ, մշակութային արժեքների պաշտպանությամբ զբաղվող անձինք, ֆոնդապահներ:

Մասնակցության համար անհրաժեշտ է դիմել armheritage@gmail.com հասցեով՝ նշելով անուն ազգանուն, պաշտոն, կազմակերպության տվյալներ: